

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Խաչատուր Արուսյանի անվան Հայկական պետական մանկավարժական
համալսարանի ռեկտոր, **ՊՐՈՖԵՍՈՐ ՍՐԲՈՒՂԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ**



(Handwritten signature)

25-ը հունիսի, 2024թ.

Կարծիք

Վեներա Հովհիկի Ավետիսյանի «Էթնոմշակութային դիսկուրսը Գոհար Մարկոսյան-Կասպերի ստեղծագործությունում» թեմայով, ներկայացված 10.01.03 – «Գրականագիտություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է Գոհար Մարկոսյան-Կասպերի ստեղծագործություններում ժամանակակից հասարակությանը հուզող հարցերի բարձրաձայնմամբ: Սույն գիտական աշխատանքը միտված է համալրելու արդի ռուսալեզու գրականությանը և պոստմոդեռնիզմին նվիրված ուսումնասիրությունների շարքը և առանձնացնելու էթնոմշակութային դիսկուրսի նշանակությունը և կարևորությունը Գոհար Մարկոսյան-Կասպերի վեպերում:

Գոհար Մարկոսյան-Կասպերի ստեղծագործությունների համակարգված ուսումնասիրությունն, անկասկած, խորապես կրնալայնի նորագույն շրջանի գրականության վերաբերյալ մեր պատկերացումների ու իմացության շրջանակները, կամբողջացնի գրապատմական ժամանակաշրջանի գեղարվեստական զարգացումների համապատկերը:

Ուսումնասիրության առարկան են Գոհար Մարկոսյան-Կասպերի ստեղծագործությունները, "անտիկ շարքը" և դրա էթնիկական, մշակութային և գենդերային բաղադրիչները:

Աշխատանքի գիտական նորույթը: Գ.Մարկոսյան-Կասպերի առանձին գործերի վերաբերյալ գրվել են հոդվածներ, գրախոսություններ, ակնարկներ, ինչը, սակայն, բավարար չէ հեղինակի գրական ժառանգությունը պատշաճ կերպով ներկայացնելու համար: «Էթնոմշակութային դիսկուրսը Գոհար Մարկոսյան-Կասպերի ստեղծագործությունում» ուսումնասիրությունն այդ բացը լրացնելու առաջին փորձն է:

Ատենախոսության մեթոդաբանությունը հիմնված է Մ. Էպշտեյնի, Մ.Լիպովեցկու, Ի.Սկոբոպանովի, Ե.Մելետինսկու, Ու. Էկոյի, Ռ. Բարտի, Ս.Բոյմի, Վ. Շկլովսկու և այլ գրականագետների տեսությունների վրա:

Ատենախոսական հետազոտությունը կառուցված է տրամաբանորեն, այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից (իրենց ենթագլուխներով), եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ծավալը 122 էջ է՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

Ներածությունում կարևորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է դրա ուսումնասիրվածության աստիճանը, ձևակերպվել են նպատակն ու խնդիրները, հիմնական արդյունքները, գիտական նորույթը և ուսումնասիրության գործնական նշանակությունը:

Առաջին գլխում («Էթնոմշակութային դիսկուրսը արդի ռուս գրականության մեջ»), որը ներառում է ընդամենը մեկ ենթագլուխ, քննվում է էթնոմշակութային մտածելակերպի դրսևորումը ռուսալեզու հայ գրողների ստեղծագործության մեջ, ներկայացված են ռուսալեզու հայ կին գրողները և իրենց ստեղծագործությունները:

Երկրորդ գլուխը («Գ. Մարկոսյան-Կասպերի "Պենելոպե" վեպը ռուսական պոստմոդեռնիստական գրականության համատեքստում») բաղկացած է հինգ ենթագլխից, որոնցում դիտարկված են Գ.Մարկոսյան-Կասպերի ստեղծագործության մեջ ռուսական պոստմոդեռնիզմի հիմնական դրույթների արտացոլումը, գրական ճանապարհորդության, հեզնանքի, պարողիայի և «հակահեզնանքի» (Մ. Էպշտեյն) ծածկագրերը գրողի արձակում: Ներկայացվում է «սահմանագիծ», որտեղ պոստմոդեռնիզմը միահյուսվում է մոդեռնիզմի հետ: Առանձին-առանձին բացահայտվում և վերլուծվում են հղումները ռուս և

Ֆրանսիական գրականությանը «Պենելոպե» վեպում, մեկնաբանվում են շեքսպիրյան ակնարկները:

Երրորդ գլուխը («Էթնոմշակութային դիսկուրսի դրսևորման ձևերն ու մեթոդները Գ.Մարկոսյան-Կասպեր պոետիկայում») բաղկացած է չորս ենթագլխից, այստեղ ուսումնասիրվում են միջմշակութային փոխազդեցությունը «անտիկ շարքի» վեպերում, առօրյա կենցաղավարության բանաստեղծականացումը «Պենելոպե» վեպում, անտիկ դիսկուրսը գրողի պոետիկայի մեջ, գենդերային հիմնախնդիրները և առասպելի վերաիմաստավորումը «Կարիատիդներ» վեպում:

Եզրակացությունն բաժնում ներկայացվել են ատենախոսության հիմնական արդյունքներն և եզրահանգումները:

Այսպիսով, հետազոտության գիտական նորույթը կասկածից վեր է: Ատենախոսությունը աչքի է ընկնում հմտորեն կատարած գրականագիտական վերլուծությամբ: Հետազոտության անկասկած առավելությունն այն է, որ հեղինակը, համատեքստային կապերը վերլուծելուց բացի, հաշվի է առնում նաև պատմական համատեքստը, սոցիալական և մշակութային գործընթացի բոլոր այն գործոնները, որոնք ազդել են ուսումնասիրվող ստեղծագործությունների վրա:

Սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և ընդգրկում է դրա հիմնական դրույթներն ու արդյունքները:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ Վ. Ավետիսյանի ատենախոսությունը լուրջ գիտական աշխատանք է, որը կհետաքրքրի տարբեր բնագավառներում աշխատող գրականագետներին:

Աշխատանքը առավել կատարյալ տեսնելու համար կցանկանայինք նշել մի քանի դիտարկում.

- Անհասկանալի է առաջին գլխի կառուցվածքը՝ սկզբի երկու էջում հեղինակը անդրադառնում է ռուս գրականության էթնոմշակութային դիսկուրսին, դրան հաջորդում է առաջին և միակ ենթագլուխը, որտեղ ներկայացվում են ռուսալեզու արձակի խնդիրները:

- Ատենախոսը չի անդրադառնում Գ. Մարկոսյան-Չասպերի «Пенелопа пускается в путь», «В Микенах, златом обильных», «Memento mori» ստեղծագործություններին, իր ուշադրությունը սեռեղծված հիմնականում «Պենելոպե» վեպի վրա:
- Վ.Ավետիսյանը զուգահեռներ է անցկացնում «Պենելոպեի» և «Ուլիսեսի» միջև, առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ժամանակի դրսևորման ձևերին: Հետաքրքիր կլինեք զուգահեռներ անցկացնել նաև Պենելոպեի՝ Երևանի և Բլումի՝ Դուբլինի միջև:
- Խոսելով ռուսալեզու հայ գրողների մասին՝ հետազոտության հեղինակը հատուկ ուշադրություն է դարձնում Ն.Աբգարյանի, Կ.Արությունովայի, Մ.Պետրոսյանի ստեղծագործություններին: Այդ շարքը կարելի էր ընդարձակել: 26-րդ էջում կարդում ենք՝ «Вспомним, что в середине 70-х годов прошлого века совместными усилиями прозаика Леонида Гурунца при Союзе писателей Армении была создана секция русскоязычных армянских писателей, которая объединяла известных писателей и литературоведов, таких как: Зорий Балаян, Вруйр Баласян, Наталья Гончар, Альберт Налбандян, Нелли Саакян, Татьяна Геворкян и др.»: Կարծում ենք, որ արժեք հիշատակել նաև Ս.Վերմիշևային, Լ.Մկրտչյանին, Հով.Ազնավուրյանին, Վ.Վարդանին և այլոց:
- Բովանդակության մեջ, որպես օգտագործված գրականության ցանկի բաժիններ, նշված են գեղարվեստական գրականությունը և մենագրությունները, բայց այստեղ ներկայացված են նաև հոդվածներ / էջ 118/ և անգլալեզու գրականություն / էջ 121/:

Վերը նշվածն ամենևին չի նվազեցնում ատենախոսի կատարած հետազոտության արժանիքները: Ուսումնասիրությունն առանձնանում է գիտական հստակությամբ, նորույթի հիմնավորվածությամբ, եզրակացությունների ճշգրտությամբ: Ատենախոսությունը և սեղմագիրը շարադրված են հստակ


գիտական ոճով, դրանց ձևավորումը համապատասխանում է ԲԳ ԿԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին:

Կարծում ենք, որ ատենախոսությունը բավարարում է ԲԳ ԿԿ-ի՝ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջները, ատենախոս Վեներա Հովհիկի Ավետիսյանը արժանի է 10.01.03 – «Գրականագիտություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Ատենախոսությունը քննարկվել է և վերջինիս վերաբերյալ եզրակացությունը հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Արտասահմանյան գրականության ամբիոնի 2024 թվականի հունիսի 25-ի թիվ XIX նիստում՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ռ. Թադևոսյանի, Բ.Գ.Թ., դոցենտ Ի. Սարկիսյանի, Բ.Գ.Թ., դոցենտ Զ. Բեջանյանի, Բ.Գ.Թ., պրոֆ. պ. Ս. Նուրալովայի, Բ.Գ.Թ., դոցենտ Մ.Գիլավյանի, Բ.Գ.Թ., դոցենտ Ա.Ամիրխանյանի մասնակցությամբ:

Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ

Բ.Գ.Պ., պրոֆեսոր ՌՌԻԶԱՆ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ



Ռուզան Թադևոսյանի ստորագրությունը հաստատում են՝

ՀՊՄՀ գիտական քարտուղար, մ. գ. թ., դոցենտ ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ



25-ը հունիսի, 2024թ.